# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 46-Ա

«06» հուլիսի 2022 թվականի — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

**որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի հուլիսի 6-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2022 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին ի գիտություն ընդունելու մասին:
   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) :
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 18-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   (Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) :

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող բնակելի տունը, ավտոտնակը եվ նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նվիրատվության կարգով քաղաքացի Սուսաննա Համազասպի Մաթևոսյանին օտարելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում (բնակավայր՝ Հողմիկ) քաղաքացի Վարդուշ Կնյազի Հարոյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունները (բնակելի տուն, ավտոտնակ, հացատուն) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու եվ վարձակալության տրամադրման պայմանները հաստատելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նոր կազմը համալրելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի առաջադրման մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջեից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներին դրամաշնորհ հատկացնելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան) :
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակիչներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմանում գտնվող /բնակավայր՝ Բյուրակն/, համայնքի սեփականություն հանդիսացող 08-033-0144-0001 կադաստրային ծածկագրով 0.160106 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի հողերի կատեգորիա, հասարարական կառուցապատման գործառնական նշանակություն փոխելու համար համաձայնություն տալու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտերը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակները հաստատելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):
14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

*Կողմ՝ 8* *Դեմ՝* *Ձեռնպահ*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Վարդանյան Ա.
Աբրահամյան Ն.
Հարությունյան Վ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«06» հուլիսի 2022 թվականի
գյուղ Ամասիա